Ծալկայի շրջանի Ղուշչի գյուղի «Սուրբ Գևորգ» եկեղեցում Սուրբ Պատարագ մատուցելու և գեղեցիկ համերգ տալու նպատակով հունիսի 22-ին Վիրահայոց Թեմի
առաջնորդի գլխավորությամբ Թբիլիսիից
մեկնեցին հոգևոր դասի և «Հայարտուն» կենտրոնի պաշտոնեության ներկայացուցիչները՝

«Վանք» պարային համույթի և անհատ կատարողների ուղեկցությամբ: Ղուշչիում նրանց միացավ Ա
խալքալաքի
և
մերձակա
գյուղերի
հոգևոր
հովիվ
Տ
.
Տաթև

քահանա
Մարուքյանը
եկեղեցական
երգչախմբով
:
Տեղում հ
յուրերին
դիմավորեց
Սամցխե
-
Ձավախքի
ընդհանուր
առաջնորդական
փոխանորդության
Ծալկայի
շրջանի
հայկական
համայնքների
հոգևոր
հովիվ
Տ
.
Մովսես
քահանա
Մանուկյանը
:

Ղուշչիի 19-րդ դարի կառույց «Սուրբ Գևորգ» եկեղեցում, Վիրահայոց Թեմի առաջնորդ Գեր
աշնորհ
Տեր
Վազգեն
եպիսկոպոս
Միրզախանյանի
հանդիսապետությամբ,
մատուցվեց
Սուրբ
Պատարագ
:
Պատարագիչն
էր
Տ
.
Մովսես
քահանա

Մանուկյանը
:
Պատարագին
ներկա
էին
Ծալկայի
ժողովրդական
ժողովի
փոխնախագահ
Գոչա
Խաչատրյանը
,
Նարդևան
,
Դաշբաշ
,
Դարակով
,
Բուռնաշեթ գյուղերի գյուղապետներ
Անթառամ
Մելտոնյանը
,
Գիորգի
Պեպենյանը
,
Բաբգեն
Վահրադյանը
,
Մխիթար
Սարգսյանը,
Վարդան
Մեհրաբյանը և ուրիշներ
:

Պատարագի վերջում հավատացյալներին քարոզի խոսքով դիմեց և իր օրհնությունը հղեց Վ
իրահայոց
Առաջնորդը
:
Խոսելով
օրվա
խորհրդի՝
Սբ
.
Տրդատ

թագավորի
,
Աշխեն
թագուհու
և
Խոսրովիդուխտ
կույսի
մասին
,
Սրբազան Հայրը
պատգամ արեց
հավատարիմ
մնալ
հավատքին
,
պահել ու պահպանել մեր
լեզուն
,
զարգացնել ժողովրդական
մշակույթն
ու
ավանդույթները
:

Այնուհետև գյուղի մարզադաշտում Թբիլիսիից ժամանած թիվ 104 դպրոցի «Վանք» պարայ
ին համ
ույթի
(
պարուսույց
Լիանա
Կաշավանիձե
)
և
անհատ
կատարողներ
Աննա
Պողոսովայի
,
Անի
Ղուշչյանի
,
Ռուբեն
Ոսկանյանի
,

Հենրիխ
Պետրոսյանի
և
Ախալքալաքից
ժամանած եկեղեցական
երգչախմբի (խմբավար՝ Միրա Այվազյան)
մասնակցությամբ բացօթյա տրվեց ճոխ համերգ: Ղուշչիի գյուղապետ Վարդան Մեհրաբյանն իր երախտագիտությունը հայտնեց այցելության և տոնական տրամադրություն ստեղծելու կապակցությամբ:

Բազմամարդ մարզադաշտը, ջերմ և սրտառուչ ընդունելությունը փաստեցին,որ հոգևոր-մշակութային այցելությունները անհրաժեշտ են հայաբնակ տարածաշրջանների լեռնային գյուղերի բնակչության համար:

https://www.facebook.com/media/set/?set=a.393693010747517.1073741949.113192792130875&type=3&uploaded=36#